ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՏԵՂԱԿԱԼԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Մայիս 30. № 1610. *Արձակուրդ Մայր Աթոռի վանական կառավարութեան Նախագահ Տ. Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեանցին Գանձակի, Շուշի, և Զանգեզուրի գաւառը գնալու Տօթևի կալուածների գործի համար։*

Յունիս 1. № 1612. *Առաջարկուեց Սինոդին, Մագիստրոս Տ. Մեսրոպ եպիսկոպոսի հսկողութեամբ Ս. Գայիանէի վանքի խաչկալը նորոգել և բնական քարի գոյն տալ։*

Յունիս 1. № 1613. *Առաջարկուեց Տպարանի վարչութեանը Գանձակու Հոգ. կառավարութեան միջոցով Ղարադաղլու և Խոյլար գիւղերին եկեղեցական գրքեր ուղարկելու համար։*

Յունիս 2. № 1616. *Առաջադրուեց Մագիստրոս Տ. Մեսրոպ եպիսկոպոսին Մայր Աթոռիս միաբան Աբէլ Աբրահամեանին և Ռուբէն Մանասեանին սարկաւագ ձեռնադրել։*

Յունիս 7. № 1625. *Արձակուրդ Մայր Աթոռի Ճեմարանի տեսուչ Տ. Բագրատ վարդապետին Թիֆլիս գնալու, գիւղատնտեսական դասընթացքներ կազմակերպելու համար մասնագէտների հետ խորհրդակցելու և առաջիկայ ուսումնական տարուայ համար Ճեմարանի ուսուցչական խումբ կազմելու։*

Յունիս 7. № 1628. *Տպարանի վարչութեան անունով առաջադրութեամբ Աբէլ և Ռուբէն սարկաւագները նշանակուեցին Տպարանի վարչութեան անդամներ։*

Յունիս 7. № 1630. *Ուղարկելով Սինոդին Ներքին*

Գործոց Նախարարի մայիսի 25-ին № 4868 գրութեան պատճէնը՝ առաջադրուեց Սինոդին թոյլ տալ Տ. Յուսիկ վարդապետ Զոհրաբեանին վարել Սինոդի անդամութեան պաշտօնը, նրան դաշնակցականութեան մէջ մեղադրուելու գործը կարճուած լինելով։

Յունիս 7. № 1633. Առաջադրուեց Մայր Աթոռիս Ճեմարանի վարչութեանը, Մանկավարժական ժողովի որոշման համեմատ պ. Սեներքերիմ Տէր Յակոբեանին և Յակոբ Յարութիւնեանին ճանաչել Հանգ. Ա. Բ. Ղուկասեանի որդեգիրներ։

Յունիս 8. № 1637. Առաջադրութեամբ ուղարկուեց Մայր Տաճարի լուսարարապետ Տ. Ղեւոնդ եպիսկոպոսին Հանգ. Աղեքսանդր Մանթաշեանի թանկագին դիպակ դիաղարդը։

Յունիս 15. № 1658. Առաջադրուեց Մոսկուայի Յարութիւն աւագ քահանայ Պապովեանին Մուշի Պապովեան վարժարանի շինութեան համար Մշոյ առաջնորդից ստացած տեղեկութիւնները հաղորդել Տիկ. Տիրուհի Պապովեանին։

Յունիս 17. № 1662. Առաջադրութեամբ յայտնուեց Ատրպատականի Հայոց առաջնորդ Տ. Կարապետ եպիսկոպոսին թէ հեռագրուեց Կովկասի Գ. Փոխարքային Ատրպատականի և յատկապէս Ղարադաղի ու Մակուայ շրջանի հայերին և Ս. Թադէոս առաքեալի վանքին պաշտպանութիւն ցոյց տալու համար հարկաւոր ցուցումներ անել Թաւրիզի գեներալ-հիւպատոսին։

Յունիս 20. № 1666. Առաջադրուեց Ատրպատականի առաջնորդ Տ. Կարապետ եպիսկոպոսին տեղեկութիւն տալ, թէ Աւարայրի դաշտում կա՞յ եկեղեցի կամ մատուռ, և եթէ կայ, ինչ դրութեան մէջ է։

Յունիս 20. № 1670. Յանձնարարուեց Կարնոյ առաջնորդ Տ. Սմբատ եպիսկոպոսին ուղարկելու տեղւոյն Սանասարեան վարժարանի պատմութիւնը։

Յունիս 22. № 1670. Առաջադրուեց Մայր Տաճարի Լուսարարապետ Տ. Ղեւոնդ եպիսկոպոսին Տ. Արիստակէս վարդապետին կարգել կրտսեր լուսարար մինչև նոյն պաշտօնը վարող Սահակ վարդապետ Աստուածատրեանի վերադարձը։

Յունիս 23. № 1681. Առաջադրուեց Ս. Էջմիածնի Սինօդին շրջաբերական հրամանով պատուիրել կոնսիստորիաներին, ընծայացուների քննութեան ժամանակ պահանջել նրանց լուսանկարը, որը և կցել նրանց ստացած վկայականին։

Յունիս 26. № 1687. Առաջադրուեց Մայր Աթոռի Վանական կառավարութեանը Մայր Աթոռի հիւրատան համար հաստատած կանոնները տպագրել և գործադրել, ծանուցանելով սենեակների որմերին։

Յունիս 226. № 1689. Առաջադրութեամբ յայտնուեց Թիֆլիզի կոնսիստորիայի Նախագահող Տ. Եփրեմ եպիսկոպոսին, թէ Թիֆլիզում ընդհանուր քահանայական ժողով գումարելու խնդիրը ընթացք չի կարող ստանալ մինչև Նորընտիր Հայրապետի գահակալութիւնը։

Յունիս 27. № 1692. Առաջադրուեց Աստրախանի առաջնորդ Տ. Մխիթար եպիսկոպոսին թոյլ տալ Կոկանդ-քաղաքի աղօթատան կից բանալ եկեղեց.-ծխ. միդասեան դպրոց։

Յունիս 29. № 1694. Յայտնուեց Ամերիկայի Հայոց Հովուութեանը, թէ Տ. Մուշեղ եպիսկոպոսը որպէս Սսոյ միաբան չի կարող Ամերիկայի Հայոց առաջնորդ լինել, որովհետև Ամերիկան Մայր Աթոռի տէրունի թեմ է։

Յունիս 29. № 1696. Առաջադրուեց Թիֆլիզի կոնսիստորիայի Նախագահող Տ. Եփրեմ եպիսկոպոսին և Բաքուի գործակալ Տ. Եղիշէ աւագ քահանայ Գեղամեանցին ստանալ բարեսէր անձանց ամեն տեսակ նուէրները և ուղարկել Ատրպատականի Հայոց Թեմական Խորհրդին Ղարադաղի և Մակուայ խանութեան աւերուած հայ գիւղերի կարօտ բնակիչներին բաշխելու համար։

Յունիս 30. № 1698. Կովկասեան փոխարքայի պաշտօնակատարից խնդրուեց տնօրինել, որ Թաւրիզի ռուսաց Գեներալ հիւպատոսը պահակներ տայ տեղւոյն առաջնորդ Տ. Կարապետ եպիսկոպոսին գնալու Ս. Թադէոս առաքեալի վանքը վանահօր սպանութեան և աւերածութիւնների հանգամանքը քննելու համար։

Յուլիս 1. № 1699. Առաջադրութիւն Ատրպատականի Հայոց առաջնորդ Տ. Կարապետ եպիսկոպոսի անունով, որով յայտնուեց թէ իրան պահակներ տալու համար դիմուեց ուր հարկն է։

ԳԱՂՈՒԱԾ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳԻՐՆԵՐԻՑ

Յունիսի 1-ին թ. 385, Սինոդը լսեց Երևանի Կոնսիստորիայի անցած Մարտի 13-ի թ. 1884 յայտարարութիւնը Զանգեզուրի գաւառի Եայջի գիւղացի Թէոդորոս Տէր Սահակեանին թահանայ ձեռնադրելու մասին. որոշեց. թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ Թէոդորոս Տէր Սահակեանին և առաջադրել Երևանի Փոխ-Թեմակալին ձեռնադրել նրան քահանայ Եայջի գիւղի համար։

Յունիսի թ. 390. 3-ին Սինոդը լսեց Երևանի Կոնսիստորիայի անցած փետրուարի 26-ի թ. 1028 յայտարարութիւնը մահմեդական Ալի Ռեզա օղլուն լուսաւորչական դաւանութիւն ընդունելու մասին. որոշեց. թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային ընդունել Հայաստանեաց եկեղեցու ծոցը Նոր Բայազետի գաւառի Նորագուղ գիւղի վերաբնակիչ մահմեդական քուրդ Ալի Ռեզա օղլուն։

Յունիսի 3-ին թ. 391. Սինոդը լսեց Երևանի Կոնսիստորիայի անցած ապրիլի 30-ի թ. 2625 յայտարարութիւնը Էջմիածնի գաւառի Բիւրական գիւղի բնակիչ Գեղամ Տէր Յովհաննիսեան Սաղաթելեանին Ինաքլու գիւղի վերայ քահանայ ձեռնադրելու մասին. որոշեց. թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ յիշեալ Սաղաթելեանցին և առաջադրել Երևանի Փոխ-Թեմակալին